

Հայաստան

Կոռուպցիայի ընկալման 2008թ. համարիվ 2.9 (109-րդը 180 երկրների շարքում)

Կոնվենցիաներ

Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ քաղաքացիական իրավունքի կոնվենցիա (ստորագրվել է 2004թ. փետրվարին, վավերացվել 2005թ. հունվարին)

Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ քրեական իրավունքի կոնվենցիա (ստորագրվել է 2003թ. մայիսին, վավերացվել 2006թ. հունվարին)

Կոռուպցիայի դեմ ՍՍԿ-ի կոնվենցիա (ստորագրվել է 2005թ. մայիսին, վավերացվել 2007թ. մարտին)

Օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ

- 2007թ. սեպտեմբերին, երեք ամիս բափոր մնալուց հետո գրադարձվեց Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Հանձնաժողովի նախագահ դարձավ ՀՀ Նախագահի օգնական Գևորգ Սիերյանը: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի սեպտեմբերի 7-ի նիստում¹ պարուն Սիերյանը հայտարարեց, որ անհրաժեշտ է մշակել հակակոռուպցիոն նոր ռազմավարություն և միջոցառումների ծրագիր և որ, հիմք ընդունելով հանձնաժողովի հաշվետվությունները և խորհրդի արձանագրությունները, միջոցառումների նախորդ ծրագիրը կարող է համարվել կատարված: 2008թ. սկզբին կազմավորվեց հակակոռուպցիոն տեղական փորձագետներից կազմված աշխատանքային խումբ: Ելնելով մինչ այդ մշակված տեխնիկական առաջադրանքի պահանջներից՝ աշխատանքային խումբը ձեռնամուխ եղավ նոր ռազմավարության մշակմանը՝ հրնացած առաջին գույքը դիտողությունների և առաջարկությունների համար ներկայացնելով քաղաքացիական հասարակության ու միջազգային կազմակերպություններին:
- 2007թ. Հայաստանը սկսեց քայլեր իրականացնել Եվրախորհրդի Կոռուպցիայի դեմ երկրների խմբի (GRECO) հանձնարարականների կատարման ուղղությամբ: Նույն տարվա

սեպտեմբերին GRECO-ին ներկայացված հաշվետվության² համաձայն Հայաստանն ամբողջովին կատարել է տասը հանձնարարականների պահանջները, յոթ հանձնարարականների պահանջները կատարվել են մասնակիորեն, իսկ յորինը ընդհանրապես չեն կատարվել: Այս տեղեկատվության հիման վրա GRECO-ի փորձագետները պատրաստեցին համապատասխանության գեկույց, որն ընդունվեց 2008թ. հունիսին, GRECO-ի 38-րդ նիստի ժամանակ:

- 2005թ. նոյեմբերի 27-ի հանրարվելի արդյունքում կատարված սահմանադրական փոփոխություններից հետո 2007թ. հունիսին ուժի մեջ մտավ սահմանադրական նոր դրույթ³, ըստ որի Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատը, հանրապետության բարձրագույն վերստուգիչ մարմինը, դարձավ անկախ մարմին: Նախկինում այն խորհրդարանի ենթակայության տակ էր:

² 2006թ. մարտի 10-ին իր 27-րդ լիազումար նիստի ժամանակ GRECO-ն Հայաստանի կառավարությանը պաշտոնապես ներկայացրեց քանչորս հանձնարարականներ, որոնք մշակել եր GRECO-ի գնահատող խումբը՝ Ելնելով «Առաջին և երկրորդ փուլերի համատեղ գնահատման գեկույցի» շրջանակում 2005թ. մայիս-հունիսին Հայաստան կատարած այցի արդյունքներից:

³ Հայաստանի Հանրապետության սահմանադրության 83.4 հոդված:

¹ Հայաստանի Հանրապետություն օրաբերք, 8 սեպտեմբերի, 2007թ.:

- Խորհրդարանը պալատի նոր նախագահին նշանակեց 2007թ. նոյեմբերի 5-ին⁴:
- 2007թ. մայիսին ընդունվեց «Դատախազության մասին» նոր օրենքը, որով կյանքի կոչվեցին հակակոռուպցիոն բնույթի մի շարք կարևոր փոփոխությունները⁵: Այդ փոփոխությունները ներառում էին գլխավոր և մնացած դատախազների նշանակման նոր ընթացակարգերը, դատախազության դպրոցի հիմնադրումը և դատախազների նկատմամբ կարգավահական պատասխանատվության ենթարկելու նոր կարգը: Կազմավորվեց նաև օրենքով նախատեսված էքիկայի նոր հանձնաժողով և ներդրվեց դատախազների ու դատախազություններում աշխատող այլ աշխատակիցների վարձատրման նոր համակարգ: Բացի այդ, գլխավոր դատախազն այլևս չի կարող հետաքննություն և նախարձնություն իրականացնել: Նախկինում հնարավոր էր պաշտոնեական դիրքի չարաշահում, քանի որ միևնույն մարմինը կարող էր միաժամանակ իրականացնել նախարձնություն և վերահսկել նախարձնության օրինականությունը: Այս գործառույթները ներկայում իրարից առանձնացված են:
 - 2007թ. հոկտեմբերի 11-ին ընդունվեց «Արժեքների շուկայի մասին» նոր օրենքը⁶: Օրենքը պաշտ-պանում է ներդրողների իրավունքները և օրինական շահերը և խթանում է արժեքների շուկայի թափանցիկությունը և կայուն ու արդյունավետ զարգացումը՝ նպաստելով արժեքների գնաճման համակարգի հուսալիության բարձրաց-մանը և արժեքների շուկայում համակարգային ռիսկերի կրծատմանը:
 - 2007թ. հոկտեմբերի 22-ին Հայաստանի խորհրդարանը ընդունեց «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը⁷: Օրենքի ընդունումը ներառված էր հակակոռուպցիոն առաջին ռազմավարության միջոցառումների ծրագրում: Այն սահմանում է պետական մարմինների կողմից իրականացվող քննչական

գործողությունների ձևը՝ ներառյալ նրանց իրավունքները և պարտականությունները, ոպերատիվ հետախուզական գործունեության տեսակները և վերահսկողությունն ու ստուգումը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մտահոգություն էին արտահայտել, որ օրենքը կարող է օգտագործվել քաղաքական նպատակներով: Այս մտավախությունները հաստատվեցին, եթե պարզվեց, որ իրավապահ մարմինները գաղտնալսում էին ընդիմադիր քաղաքական գործիների խոսակցությունները նախագահական ընտրությունների նախընտրական քարոզության ժամանակ և դրամից անմիջապես հետո:

- Կատարվեցին մի շարք փոփոխություններ, որոնք կարող են նպաստել կոռուպցիայի կրծատմանը: Դրանք էին «Հաստատագրված վճարների մասին» օրենքը (2007թ. հուլիս), «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքը (2007թ. հոկտեմբերի 11), «Պարզեցված հարկի մասին» օրենքը (2007թ. հուլիսի 3) և «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» օրենքը (2007թ. դեկտեմբերի 18)⁸:

Մաքսային ծառայությունում կռուպցիան բացահայտելու համար ընկերության նեկավարությունը հայտնվեց բանտում

| | |
|---|--|
| <p>Մաքսային համարվում ամենակռումպացված մեկը: Ըստ 2006թ. Թրանսֆարենսի հնթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ, նախկինում՝ Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսֆարենսի հնթերնեշնլ Հայաստան - ՏԶԿ/ԹԻ Հայաստան) կողմից իրականացված հարցման արդյունքների, հարցվածների 85 տոկոսը մաքսային համակարգը համարել է «մասամբ կոռումպացված», «կոռումպացված» կամ «շատ կոռումպացված»⁹:</p> | <p>ծառայությունը է Հայաստանի ամենակռումպացված ծառայություններից մեկը: Ըստ 2006թ. Թրանսֆարենսի հնթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ, նախկինում՝ Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսֆարենսի հնթերնեշնլ Հայաստան - ՏԶԿ/ԹԻ Հայաստան) կողմից իրականացված հարցման արդյունքների, հարցվածների 85 տոկոսը մաքսային համակարգը համարել է «մասամբ կոռումպացված», «կոռումպացված» կամ «շատ կոռումպացված»⁹:</p> |
|---|--|

⁴ Հայաստանի Հանրապետության Պաշտոնական տեղեկագիր, հաստ. 55 (579), 2007թ. նոյեմբերի 14:

⁵ Հայաստանի Հանրապետության Պաշտոնական տեղեկագիր, հաստ. 19 (543), 2007թ. ապրիլի 11:

⁶ Հայաստանի Հանրապետության Պաշտոնական տեղեկագիր, հաստ. 53 (577), 2007թ. հոկտեմբերի 31:

⁷ Հայաստանի Հանրապետության Պաշտոնական տեղեկագիր, հաստ. 59 (583), 2007թ. նոյեմբերի 28:

⁸ Բոլոր այս օրենքները իրատարակված են Հայաստանի Հանրապետության Պաշտոնական տեղեկագրի, համապատասխանաբար, հետևյալ հատորներում՝ 37 (561), 2007, 54 (578), 2007, 37 (561), 2007 և 2 (592), 2008:

⁹ Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսֆարենսի հնթերնեշնլ Հայաստան և ՍԱԿ-ի Զարգացման ծրագիր, «Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում 2006» (Երևան, ՏԶԿ/ԹԻ Հայաստան/ՍԱԿ ԶԾ, 2006թ.):

Այս ընկալումը հաստատվեց նաև 2008թ. ապրիլի 17-ին Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից Մաքսային պետական կոմիտեի (ՄՊԿ) աշխատակիցների հետ հանդիպմանը¹⁰. այնտեղ մասնակիցների ուշադրությունը սևեռվեց մաքսային ծառայողների հետ գործարքի մեջ մտած գործարարների կողմից մաքսանենազ ճանապարհով ապրանքների ներկրման, ինչպես նաև մաքսային պարտավորություններից խուսափելու այլ փորձերի վրա: Նախագահն իր մտահոգությունը հայտնեց ներմուծված ապրանքների արժեքը ՄՊԿ-ի կողմից սահմանելու՝ ոչնչով շահմանափակված լիազորության առնչությամբ: Սակայն շատ լրագրողներ և փորձագետներ¹¹ բերահավատորեն վերաբերվեցին կոռուպցիայի դեմ պայքարի իրական քաղաքական կամքի առկայությանը՝ մասնավորապես հաշվի առնելով այն, որ 2008թ. ապրիլին Նախագահ Սարգսյանը ՄՊԿ նոր դեկավար նշանակեց Գագիկ Խաչատրյանին, որն անմիջականորեն ներգրավված էր եղել ստորև նկարագրված գործում:

2004թ. հուլիսի 26-ին «Ույալ Արմենիա» ՄՊԸ համատեղ ձեռնարկության նախագահ Գագիկ Հակոբյանը և նախկին գործադիր տնօրեն Արամ Ղազարյանը հրավիրեցին մամուլի ասուլիս¹²: Ասուլիսի ժամանակ նրանք պնդում էին, որ սկսած 2003թ. գարնանից՝ ՄՊԿ-ն պարբերաբար խորական վերաբերնունը էր դրսնորում ընկերության նկատմամբ, որը սուրճ (հանրապետություն ներմուծվող սուրճի 10 տոկոսը) և սմնդամբերք է ներմուծում Հայաստան: ՄՊԿ-ն մեղադրվում էր ընկերության հաշիվ-ապրանքագրերը հաշվի չառնելու և այլ սուրճ ներմուծողների համեմատ իրենց կողմից ներկրած սուրճի համար ավելի բարձր մաքսային գներ սահմանելու մեջ: Այս ընկերության և մյուս ներմուծողների կողմից լրացված մաքսային հայտարարագրերի համեմատելի պատճենների հիման վրա նրանք ցույց տվեցին, որ

որոշ դեպքերում իրենք վճարել են 50 տոկոսով ավելի, քան մյուս ներմուծողները¹³:

Չնայած ընկերությունը ՄՊԿ-ի այս գործողությունները դատական կարգով բողոքարկեց, սակայն վերջինս շարունակեց նոյն գործելակերպը¹⁴: Պարոն Հակոբյանը պնդում էր, որ ՄՊԿ այն ժամանակվա նախագահի տեղակալ պարոն Խաչատրյանը և ՄՊԿ բաժնի պետ Սուրիկ Ֆահրայյանը պահանջել են, որ իրենք կաշառք վճարեն ապրանքի խմբաքանակների համար, բայց ընկերությունը մերժել էր¹⁵: Պարոն Հակոբյանը պնդում էր նաև, որ այս մերժումն է դարձել ՄՊԿ անօրինական գործողությունների հիմնական պատճառը:

2005թ. փետրվարի 8-ին ՄՊԿ-ն ՄՊԸ-ի դեմ ակտ ներկայացրեց, ուստ որի վերջինս խախտել էր մաքսային ընթացակարգերը՝ ներառյալ ներմուծված սուրճի գների վերաբերյալ սխալ հաշվետվություն ներկայացնելը՝ տարբեր ժամանակներում խմբաքանակներ ներմուծելիս և՝ բարձրացնելով, և իշեցնելով պաշտոնական գները¹⁶: Այսպիսի փոփոխություններն իբր թե կատարվել էին՝ կեղծելով իրենց առևտրային գործընկերությից՝ ամերիկյան FIG ՄՊԸ-ից ստացված հաշիվ-ապրանքագրերը: Ազգային անվտանգության ծառայությունը քրեական գործ հարուցեց ընդեմ ընկերության դեկավարների և սկսեց հետաքննություն: Հակոբյանը և Ղազարյանը ձերբակալվեցին և կալանավորվեցին¹⁷:

Եղան նաև մեղադրանքներ, որ ՄՊԸ չի բավարարում համատեղ ձեռնարկության համար սահմանված չափանիշներին և անօրինական կերպով է օգտվում այն արտոնություններից, որոնք ՀՀ օրենսդրությունը ընձեռում է այդպիսի կազմակերպություններին մաքսավճարների և շահութահարկի գծով, որի արդյունքում ընկերությունն ապօրինի կերպով խուսափել է ընդհանուր առմամբ 525 միլիոն դրամ (մոտ 1.7 միլիոն ԱՄՆ դոլար) վճարելուց¹⁸: Այս մեղադրանքը հիմնված էր այն ենթադրության վրա, որ ընկերության օտարերկրյա բաժնետերը անօրինական կերպով էր բաժնետեր դարձել¹⁹: Մամուլի ասուլիսի ժամանակ ՄՊԸ դեկավարությունը հայտարեց, որ մեղադրանքներն անհիմն են:

¹⁰ Armenialiberty.org, 2008թ. ապրիլի 18

¹¹ Տե՛ս, օրինակ,

www.armenialiberty.org/armeniareport/report/en/2008/04

¹² Դատավարության ժամանակ (տես ստորև) «Ույալ Արմենիայի» իրավաբանը գործի վերաբերյալ գրավոր նյութեր է ներկայացրել Թրանսփարենտի ինքնաշխ ներկայություն կենտրոնի ներկայացուցչին՝ ներառյալ մամուլի ասուլիսի վերաբերյալ տեղեկատվությունը:

¹³ Armenialiberty.org, 2004թ. հուլիսի 26

¹⁴ Նոյն տեղում

¹⁵ ArmeniaNow.com, 2006թ. մարտի 31

¹⁶ Նոյն տեղում

¹⁷ Նոյն տեղում

¹⁸ Նոյն տեղում

¹⁹ Նոյն տեղում

Առաջին ատյանի դատարանում դատավարությունը սկսվեց 2006թ. նոյեմբերին և տևեց մինչև 2007թ. հուլիսը: 2007թ. հուլիսի 16-ին դատավոր Պարզե Օհանյանը կայացրեց արդարացման վճիռ Հակոբյանի և Ղազարյանի նվատմամբ՝ ելնելով նրանից, որ ներկայացված փաստարկները հիմնված էին ավելի շատ ենթադրությունների, քան փաստերի վրա²⁰: ՀՀ Գլխավոր դատախազությունը բողոքարկեց դատավճիռը և դիմեց վերաբննիչ դատարան, որը 2007թ. նոյեմբերի 29-ին բեկանեց առաջին ատյանի դատարանի դատավճիռը: Արդյունքում Հակոբյանն ու Ղազարյանը դատապարտվեցին ազատազրկման²¹:

Այս գործը բացառիկ է նրանով, որ ցույց է տալիս, թե ինչպես գործարարները, որոնք հետևողականորեն պաշտպանում էին իրենց իրավունքները և իրաժարվում էին ենթարկվել պետական բարձրաստիճան պաշտոնյաների ապօրինի պահանջներին, ի վերջո զոհ դարձան և դատապարտվեցին կոռուպցիայի հիմքերով: Այս առումով, անկախ ընկերության փաստացի վարդագծից, կարևոր եզրակացությունն այն է, որ իշխանություններն աչք են փակում խախտումների վրա, քանի դեռ խնդրու առարկա ընկերությունը ենթարկվում է ընդհանուր խաղի կանոններին և չի «քարդացնում» վարչակարգի կյանքը: Սակայն, եթե դա այդպես չի լինում, իշխանությունները սկսում են գործել, ինչպես եղավ այս դեպքում, և պատիժը կարող է լինել որդան արագ, նույնքան էլ դաժան:

Անորոշ ապագա մասնավոր հեռուստարնեկերության համար

2007թ. սեպտեմբերի 21-ին Լևոն Տեր-Պետրոսյանը՝ 1991թ. անկախացումից հետո Հայաստանի Հանրապետության առաջին նախագահը, 1998թ.-ի իր իրաժարականից հետո առաջին անգամ իրապարակային ելույթ ունեցավ: Իր ելույթում նա ներկա

վարչակարգը որակեց որպես «քրեական և կոռումպացված» և կոչ արեց տապալել այն²²: Ելույթը հեռարձակվեց երկու հեռուստա-ալիքներով, որոնցից մեկը տնօրինվում էր մի փոքր մասնավոր ընկերության՝ ԳԱԼԱ-ի կողմից²³: Այն ելույթից հատվածները հեռարձակեց նոյն օրը երեկոյան լրատվական ծրագրի ժամանակ, այնուհետև հոկտեմբերի 14-ին հեռարձակեց պարոն Տեր-Պետրոսյանի ելույթն ամբողջովին: ԳԱԼԱ-ի սեփականատեր Վահան Խաչատրյանի ասելով, հոկտեմբերի 14-ին և 15-ին իրեն հանդիպել են Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները և խորհուրդ տվել դադարեցնել քաղաքականության վերաբերյալ հաղորդումները հեռարձակելը: Իշխանությունները ժխտում են այս պնդումը²⁴: Հոկտեմբերի 17-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) նախագահ Գրիգոր Ամայանը պարոն Խաչատրյանին իրավիրել էր երևանյան իր գրասենյակ և տվել համանման խորհուրդ՝ նախազգուշացնելով չեռարձակել ելույթը²⁵: Պարոն Խաչատրյանը հայտարարում է, որ բոլոր երեք դեպքերում էլ նա մերժել է այս «խնդրանքները» և պնդել, որ ինքը կշարունակի իր լսարանին մատուցել անկրոնակալ տեղեկատվություն²⁶:

Դրանից հետո իշխանություններն իրք թե «հանձնարարել» են ԳԱԼԱ հեռուստարնեկերությամբ գովազներ պատվիրող մասնավոր ընկերություններին, և հոկտեմբերից ԳԱԼԱ-ն սկսեց կորցնել իր գովազդատու պատվիրաստուներին²⁷:

²² Ազատություն ռադիոկայան (Զեխիայի Հանրապետություն), 2007թ. սեպտեմբերի 21

²³ Armenialiberty.org, 2007թ. հոկտեմբերի 22:

Հարկ է նշել, որ հայկական մյուս հեռուստարնեկերությունները չեռարձակեցին այդ ելույթը:

²⁴ Armenialiberty.org, 2007թ. հոկտեմբերի 31, 2007թ. նոյեմբերի 12, տես նաև՝ www.asparez.am

²⁵ Armenialiberty.org, 2007թ. հոկտեմբերի 22:

²⁶ Գյումրիի լրագրության «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ն, որն ակտիվ ներգրավված էր ԳԱԼԱ-ի պաշտպանության քարոզաշավում, ԹիՀԿ-ին սիրով տրամադրեց այս գործի վերաբերյալ նյութերը: Գործի նկարագրության համար օգտագործվել են այդ նյութերը, ինչպես նաև նյութերը www.armenialiberty.org -ից:

²⁷ Armenialiberty.org, 2007թ. հոկտեմբերի 31, Armenialiberty.org, 31 October 2007: Stev նաև Armenia Observer լրոցում տեղադրված՝ «Որպես համերաշխության հազվադեպ քայլ հանրապետական տպագրի լրատվամիջոցների լրագրողներն այցելում են Գյումրի», 2007թ. նոյեմբերի 2:

²⁰ Armenialiberty.org, 2007թ. հուլիսի 16

²¹ Հակոբյանը դատապարտվեց վեց, իսկ Ղազարյանը՝ երկու տարվա ազատազրկման: Վերջինն ազատ արձակվեց դատարանի դահլիճից, քանի որ նա արդեն մոտ երկու տարի անցկացրել էր բանտում, իսկ Հակոբյանի պատժամկետը կրծատվեց երկու տարով: Գլխավոր դատախազությունը ավելի մեղմ պատիժ պահանջեց, քանի եթե գործը քննվում էր առաջին ատյանի դատարանում (տասներկու տարի Հակոբյանին և տասնմեկ տարի Ղազարյանին):

Հոկտեմբերի 29-ին ընկերությունում սկսվեցին պաշտոնական սոուզումները, և նոյեմբերի 14-ին ՀՀ Հարկային պետական ծառայությունը ներկայացրեց իր վերջնական հաշվետվությունը, որում ԳԱԼՍ-ի հիմնադիր «Չափ» ՍՊԸ-ն մեղադրվեց գովազդից ստացվող եկամուտները քիչ ցույց տալու միջոցով հարկերից խուսափելու մեջ²⁸. ընկերությունը մեղադրվեց իր թե 26 միլիոն դրամի (78000 ԱՄՆ դոլար) հարկեր չվճարելու մեջ: Նաև «Չափ» ՍՊԸ-ին մեղադրեցին նրանում, որ այն 2001թ. առանց դրա համար պետական լիցենզիա ունենալու արտադրել է ճայռուկներ, հանցանք, որը Խաչատրյանն ընդունեց²⁹:

«Չափ» ՍՊԸ-ն առարկեց հարկերից խուսափելու մասին մերկապարանոց մեղադրանքներին՝ փաստելով, որ այդ մեղադրանքներն ունեն քաղաքական դրապատճառներ և որ այդ ակնհայտ անձշտություններն առաջացել են սոցիալական և սեփական արտադրության (անհատական) գովազդների պատճառով, որոնք ԳԱԼՍ-ն ցուցադրում էր անվճար հիմունքներով:

2007թ. նոյեմբերի 26-ին Հարկային պետական ծառայությունը դիմեց ՀՀ տնտեսական դատարան՝ ԳԱԼՍ ընկերության բանկային հաշվեները և այլ ակտիվները հարկերի թերավճարի շափով սառեցնելու պահանջով և դեկտեմբերի 3-ին հայցն ընդունվեց դատարանի վարոյթ³⁰: Դատավարությունը տևեց մինչև 2008թ. մարտի 19-ը, երբ դատարանը հաստատեց ՀՊԸ-ի մեղադրանքները³¹: Դրամական միջոցներից գործ հեռուստարաններությունը տուգանքը վճարեց մեկշաբարյան դրամահավաքից հետո, որն ավարտվեց ապրիլի 1-ին³²:

Չուզահեռաբար Գյումրիի (որտեղ գտնվում է ԳԱԼՍ-ն) քաղաքավետը հայց ներկայացրեց տնտեսական դատարան՝ ընկերությունից պահանջելով իր հեռուստահղորդակը հեռացնել քաղաքի հեռուստաշտարակից, քանի որ հարկային պետական ծառայության պնդմանը այն ապօրինի կերպով էր գտնվում այնտեղ³³:

²⁸ Armenialiberty.org, 2007թ. հոկտեմբերի 31

²⁹ Armenialiberty.org, 2007թ. նոյեմբերի 12

³⁰ Armenialiberty.org, 2007թ. դեկտեմբերի 4

³¹ Armenialiberty.org, 2008թ. մարտի 19

³² Ս. Վանցյան, «Գյումրիի

հեռուստարաններությունն ավարտում է դրամահավաքի մարաթոնը», Ազատություն ուղղուկայան (Չեխիայի Հանրապետություն), 2008թ. ապրիլի 1

³³ Armenialiberty.org, 2007թ. դեկտեմբերի 4:

2008թ. փետրվարի 29-ին դատարանը քաղաքապետարանին բոլոյատրեց հեռացնել հաղորդակը հեռուստաշտարակից³⁴: ԳԱԼՍ-ն բողոքարկեց այս որոշումը, և ապամոնտաժումը հետաձգվեց, բայց ապրիլի 14-ին վերաբննիշ դատարանն անփոփոխ թողեց նախնական վճռը: Հաղորդակի հոսանքն անջատվեց, որպեսզի ընկերությանը ստիպեն ապամոնտաժել այն, բայց Խաչատրյանը հրաժարվեց անել դա և սպառնաց, որ դատի կտա որևէ մեկին, ով կվնասի իր սարքավորումը: Ի վերջո, ընկերությանը տասնօրյա ժամկետ տրվեց հաղորդակն ապամոնտաժելու համար³⁵, և սույն գեկույցի պատրաստման պահին այդ ժամկետը երկարացվել է մինչև աշտարակի օգտագործման վերաբերյալ ԳԱԼՍ-ի և տրանսպորտի և կապի նախարարության միջև բանակցությունների ավարտը: Ինչպես և «Ռուսական Արմենիայի» դեպքում, դժվար է գնահատել, թե արդյոք հեռուստարաններությունն իսկապես մեղավոր է իրեն վերագրվող մեղադրանքներում: Սակայն այն փաստը, որ իշխանությունները հետաքրքրություն սկսեցին քաղաքական ելույթի հեռարձակումից հետո, շատերին է ստիպում հետաքրքրություն դիտել որպես քաղաքական:

Վարուժան Հոկտեմբերի (Թրամսփարենսի ինքերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն)

³⁴ Armenialiberty.org, 2008թ. մարտի 25

³⁵ Ս. Վանցյան, «Անկախ հեռուստարաններությանը տասնօրյա ժամկետ են տվել», Ազատություն ուղղուկայան (Պրահա), 2008թ. ապրիլի 17: